ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՃՈՐՈԽԻ ԱՒԱԶԱՆԸ

(Աշխարհագրական եւ պատմական հետազօտութիւններ:)

—

(Շարունակութիւն:)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Այրարատ, Բարձր-Հայք, Գուգարք, Սիւնիք, Վասպուրական եւ Տուրուբերան նահանգներում Աչքագարեան շրջանից մնացած եւ իրենց գոյութիւնը պահպանած տիտանական ամրոցների, մարտկոցների եւ պարիսպների հսկայական տիպարները մինչեւ օրս խրոխտաբար դեռ կանգուն են Ճորոխի Աւազանում եւ նորա բարձունքների լանջերին ու կատարներին: Տայոց աշխարհը եւ Ճորոխի ամբողջ աւազանը իր քաղաքակրթական զարգացման ատիճանական շրջաններով չի տարբերում իր դրացի նահանգներից, որոց հետ բնական եւ քաղաքական կապերով շղթայած է եղել դարերից ի վեր: Ուրարտա-Ասորական, Հելլէնա-Հռովմէական քաղաքակրթական շրջաններից շատ վաղ եւ զուգընթացաբար ինչ ձեւի բերդեր, պարիսպներ, ամրոցներ, դղեակներ եւ տաճար — մեհեաններ, դերեզման — Դոլմէն-Կուրգաններ, որ մնացել են Հայաստանի կենդրոնական նահանգներում, միեւնոյն ճարտարապետական ոճը նկատելի է ամբողջ Ճորոխի Աւազանում որն ապացոյց է, թէ կուլտուրան քայլ առ քայլ առաջ է գնացել ինչպէս կենդրոնում, նոյնպէս ծայր նահանգներում, որի շօշափելի վկան է Զուարթնոցի ճարտարապետութեամբ կերտուած Անիի Գագկաշէնը եւ Ուղտիքի-Տայոցքար Բանայի տաճարները: Պարխարեան աշխարհն իր յիշատակարաններով տարբերութիւն չունի կենդրոնական Այրարատեան աշխարհից, ո՛չ միայն յետամնաց չէ, այլ աւելի հսկայական է Նախա-Ուրարտական կերտուածքներով: Երեւի պատճառն այն է, որ Նայիրի երկրի բոլոր նահանգները աւելի դիւրամատչելի են եղել դրացի բարբարոս ցեղերի արշաւանքներին, աշխարհակալների յարձակումներին, որի հետեւանքով երկրի ձեռակերտները դարէ դար կործանուել եւ անհետացել են. իսկ սրակող լեռնաշղթաներով պաշտպանուած Ճորոխի խոր խոր ձորերը, դժուարամատչելի Տայոց աշխարհը կարողացել է դիմադրել եւ տոկալ: Տայքը նոյն իսկ իր հարիւրաւոր բովերի մշակութեամբ, պղնձի, արծաթի, ոսկու եւ երկաթի հալոցների կազմուածներով քայլ առ քայլ հետեւել է Եփրատի ափերի եւ հարաւային գաւառներին-Աղձնիքին, Բալուին, Ամիդին, նոյն իսկ Միտանայի բովերի շահագործման եւ մշակման ընթացքին:

Ինչպէս որ խաղողի մշակութիւնը զարգացել է Եփրատի, Արաքսի ափերում, նրանց հետ միաժամանակ որթնատնկերը զարգացել են Ճորոխի Աւազանում: Միեւնոյնը կարելի է ասել ցորենի, գարու, բրնձի եւ ուրիշ հացահատիկների համար. թէ եւ հացահատիկները Ճորոխի Աւազանում այս ճոխութեան չեն հասել, ինչ բախտ ունեցան Բարձր-Հայքը, Տուրուբերանը, Այրարատը եւ Վասպուրականը. բայց իր խոնաւ եւ ջերմ կլիմայի պատճառով ճոխ Սիմինդը (եղիպտացորեն) աճեցրեց: Ճորոխի խոր խոր ձորերը այնքան հարուստ մշակուած ձիթենու պարտէզներ ունին, որ բաւարարում են Հայաստանի ամբողջ 15 նահանգներին, իրենց ձիթով եւ ձէթուենով, որից նրանք լիովին զուրկ են: Իսկ պղտաու ծառերով այնքան հարուստ է, որ ո՛չ միայն թարմ եւ չոր միրգ էին վոխադրում շրջակայ նահանգները, այլ թթից, հոնից, սալորից, խաղողից, տանձ ու խնձորից մաթ, պատեղ, քուսա եւ ուրիշ նիւթեր էին պատրաստում եւ արտահանում դէպի դրացի գաւառներն ու նահանգները: Իսկ անտառային փայտի տեսակներով այնքան հարուստ են, որ մրցակից չունին ոչ միայն Հայաստանի ու Վրաստանի գաւառներում, այլ ամբողջ Փոքր-Ասիայում եւ Պարսկաստանում:

Ինչպէս մեծամեծ քաղաքներ հիմնուել են Եփրատի, Տիգրիսի եւ Երասխի ափերում, այնպէս էլ հիմնուել եւ ծաղկել են Ճորոխի Աւազանում: Եփրատը եթէ պարծենում էր Թարչիշով, Կարգեմիշով, Աշտիշարով, Մալաթիայով, Մարկալով, Աշտիշարով, Ճապաղջրով, Արծնով. Արաքսը՝ Արմաւիրով, Արտաշատով, Դվինով, Անիով, Խոլմաղաբով, Բագրանով, Զարիշատով եւ

կարսով, Ճորոխն էլ դրանցից էտ չմնաց Աբերնեսով, Ահարով, Աշմուշէնով, Անիով, Բագդատով, Բահլով, Ախպատով, Արմաշէնով, Արտաշէնով, Արքունիսով, Խալխալով, Խախով, Մարմաշով, Մարկաշով, Մարաշով, Ուրով, Զերմեսով, Պալխարով, Սալաջրով, Սպերով եւ Բաբերտոնով: Այս երեքշարք քաղաքների անունները ցոյց են տալիս, որ դրանք իրարից են բղխած, բեղմնաւորուած եւ զարգացած, որոնք ձգտել են մրցել եւ իրար գերազանցել զարկ տալով քաղաքակրթութեան:

Ուր, Ուրեք, Ուրեխ, Ուրկալա, Ուրթըն, Ուրթամասի, Ուրուտ, Ուրքար եւ Ուրծմա գեղերը, որոնք չինուած են Ճորոխի Աւազանում նախկին քաղաքների, ամրոց-բերդերի աւերակներում, որոնք դուցէ նախկին չէն աւանների շարունակութիւններն են կազմում, ցոյց են տալիս Սումմէր-Ակկադների, Հաթթերի, Միտանացիների քաղաքների անունների արձագանգը մեր աշխարհում: Մանաւանդ Սպեր-Իսպիր աւանը, իր շրջակայքի պղնձի հանքերի պեղումներով եւ մշակութներով յիշեցնում է Սենաար դաշտի Սիպպարը: Խալխալ աւանը, որ իշխանական ոստանի դեր է կատարել, ինչպէս նախուրարտական շրջանում, Պահլաւ-Պարթեւների ժամանակ յիշեցնում է Զագրոսի լեռներում գտնուած Անշանի Խալխարը, Գիլանի Խարխարը, Նուխու եւ Դարալագեազի Խարխարը, որոց հետ համեմատելով աւելի հին է եւ Աչքաղարեան չէնքերով նրանցից գերազանց է: Ճորոխի Խալխարը նախապատմական, ապա կոկուած, տաշուած եւ յղկուած քարերի չինուածքներով, բերդերով, ամրոցներով, պարիսպներով, քրիստոնէական տաճարներով եւ պալատներով ցոյց է տալիս, որ նա իր դիրքը պահպանել է բոլոր յեղաշրջման ընթացքում, գոյութիւնը յարատեւել, ապրել է դարէ դար:

Խալդերի երկրի, Նահարինի աշխարհի նահանգներն ու գաւառները այնպէս են իրար շաղկապուած, որ համայն մեր երկրի անցեալի ուսումնասիրութեան համար անհրաժեշտ է ամէն մի նահանգի առանձնայատուկ վիճակի հետ ծանօթանալ, նորա անցեալն ուսումնասիրել, ներկայ վիճակը մանրամասն քննել եւ ապա բոլորը իրար միացնելով՝ դրուատել եւ գրուել այն ժողովրդին, որի կեանքը սահել է, անցել է երկրում 70—80 դարերի ընթացքում: Մեր միջնադարեան պատմաբանները շատ են խօսել, գրել Այրարատեան, Բարձր-Հայք, Գուգարք, Սիսական, Վասպուրական, Տուրուբերան նահանգների մասին, սրանք յատուկ ուսումնասիրութեան նիւթ չեն դարձրել Տայոց աշխարհը — Ճորոխի Աւազանը:

Աստուածաշնչի նման հոյակապ թարգմանութեան մեզ աւանդող նախնիքը, որոնք քրիստոնէական գրականութեան բազմազան հատորների թարգմանիչը, կազմակերպողն ու վերախմբագրողներն էին, եթէ նոյնպիսի բարեխղճութեամբ եւ տոկուն ջանքերով աշխատէին իրենց նահանգների աշխարհագրութիւնը, պատմութիւնը, կառուցուածքների նկարագրութիւնը, աւերակների պատկերը, մանաւանդ առասպելական եւ վիպական աւանդութիւնը, պոէմները գրի անցնէին եւ մեզ թողնէին, մենք ա՛նպիսի թանկարժէք գրականութիւն կ՚ունենայինք, որի դէմ կը խամրէին դրացի ժողովուրդների թողած գործերը: Եղնիկի եւ Եղիշէի նման գրողների համար դժուար չէր Յուլիոս Կեսարին եւ Տակիտին հետեւելով՝ մեր ժողովրդի վարքն ու բարքը, հաւատալիքներն ու առասպելները, էպոսներն ու նուագները գրի անցկացնել եւ անմահացնել դրանք: Շատ պարզ է, որ մեր գրագէտ վարդապետները անշնորհք չէին. նրանք իրենց առաջնորդների պահանջը լրացրել են մեծ բարեխղճութեամբ, իսկ տէր ու իշխանապետ Նախարարները այնքան անհետաքրքիր ու անտարբեր են եղել, որ միմիայն բերդեր, դղեակներ, պալատներ, կամուրջներ եւ տաճարներ չինել են տուել իրենց անհատական վայելքի համար, երբեք չեն խրախուսել գրողին, ճարտասանին, որ երկրի ժողովրդի վիճակի նկարագիրն էլ արձանագրէ: Հելլադայից Յոյն գերասաններ բերել են տուել, նրանց ներկայացումով ոգեւորուել, բայց իրենց բանաստեղծներին եւ գուսաններին չեն մտածել վարձատրել: Փարպեցին Վահանի գործերն է արձանագրում, երբ նրանցից պահանջում են կազմել այդ պատմութիւնները· Եղիշէն Մամիկոնեանի խնդրանքով Վարդանանց Պատերազմի նկարագիրն է թողում· Սմբատ Բագրատունու խնդրանքով Մով· Խորենացին Հայոց Պատմութիւնը հաւաքում, գրի է անցնում, եւ Թ· Արծրունին Արծրունի-

ների տան ներբողականն է գրում եւ բոլորը անչափ ժլատ։ Այն գրական ոյժերը, որոնք կարող էին հարիւր հատոր Եղիշէներ գրել, կուտել երկրի անցեալի գանձարանը իրենց գրուածներում, ինչպէս հազար տարուան ընթացքում զարգացած Հայ լեզուն հաւաքեցին ու թողին Աստուածաշնչի մէջ. մի-մի փոքրիկ խղճուկ հատորներով վերջացնում են այն անսահման անցքերի պատմութիւնը, որոնցից կարելի էր մի քանի Աստուածաշնչեր կազմել։

Հարիւրաւոր մեծամեծ կալուածներ իւրացրած նախարարներից տասը տարի ընթացքում նոյնիսկ տասը մեկենաս էլ չի գտնւում, որ գոնէ տասը հատոր գրել-նկարագրել տային եւ թողնէին իրենց յաջորդ սերնդին։ 400 թ. մինչեւ 1400 թ. Բագրատունիների եւ Ռուբինեանների վախճանը Հայաստանին տիրել եւ ժողովրդին կեղեքել են մի քանի հարիւր նախարարական տոհմեր, որոնք՝ կեղեքել են միլիոնաւոր բնակչութիւնը, իսկ այս հազարաւոր նախարարներից մեկենասներ չեն երեւացել, որ գոնէ 40—50 հատոր յիշատակարաններ գրել տային, յիշատակ թողնէին։ Հազար տարուան մէջ հազարաւոր գրագէտ գիտնականները կարողացել են մի քանի հարիւր կտոր կրօնական, եկեղեցական հաստատոր հատորներ թողնել, շարականներ, քարոզներ եւ մեկնութիւններ գրել. մի՞թէ չէին կարող 15 նահանգների մանրագնին աշխարհագրութիւնը թողնել, նահանգներով, գաւառներով, գիւղերով, լեռներով, առուակներով եւ վտակներով բաժանուած։ Պարսից արքայից-արքաների շրջանում, Իսլամի Խալիֆների օրով, Օսմանեան Սուլթան Սէլիմի դարում ամբողջ հայ աշխարհի բոլոր աւանները, գիւղերը, ամառանոցները, ձմեռանոցները ցուցակագրուած են իրենց բովանդակած ծխերի թւով պետական հարկային տոմարներում, մի՞թէ ամէն մի նախարար իր վիճակի աշխարհահամարը չունէր, չէ՞ր կարող կազմել տալ օրինակներ մեզ թողնել։

Մեր վարդապետ եւ միայնակեաց կղերը գեղարուեստօրէն նկարագրել են վանական տիկինների, օրիորդների հագուստի կերպասները, ասեղնագործները, ոսկի ու գոհարի զարդերը, մարգարտի տեսակները. բայց մոռացել են մեզ բացատրելու աշխատաւորի եւ երկրագործի առանին վիճակը, տուած հարկերի եւ տուրքերի տեսակները, կատարած բէգեարների չափը. մի խօսքով տարկի, սպայի, ոստանիկի եւ նախարարների յարաբերութիւնները։ Անշուշտ եթէ այդ վարդապետներից պահանջէին, ամենայն ճշտութեամբ դրանց նկարագիրն էլ կ՝ունենային։ Այսօր հայ մագաղաթների թիւը մի քանի տասնեակ հազարներ են հաշւում, բացի կորածներից ու վաստակներից, հողի տակ փտածներից եւ Բագդատի բաղնիսներում կրակարանների մէջ այրուածներից. սակայն մնացորդ չուրջ 40.000 հատոր ձեռագիրները դարձեալ մեծ գանձ է։ Բայց այս 40.000 հատորների մէջ երկրի, ժողովրդի վիճակի նկարագրութիւնը հազիւ թէ մի-երկու հարիւր օրինակից աւելի լինի, այն էլ յայտնի պատմագիրների ընդօրինակութիւններն են, խնամքով պահպանուած. մնացեալները բոլորն էլ կրօնական-եկեղեցական գրքեր են։

ԺԸ. եւ ԺԹ.րդ Դարում մեր վերածընուած գրականութիւնը առանց պետական օժանդակութեան չէր կարող մեծագործութիւն անել եւ անցեալ գրականութեան մասին ամփոփ տեղեկութիւն տալ։ Ինչ որ կատարուել է բարեգործական ընթացք է ունեցել։ Հետեւարար մինչեւ օրս Խալդերի երկրի-նախկին Հայաստանի բնավայրը չէ ուսումնասիրուած։ Աղբիւրներ չունինք, որ օգտուինք հին գրականութեան եւ արձանագրութեան բեկորներից եւ նորագոյն գրական բանասէրների ենթադրութիւններից։ Մեր երկրի ցեղի, լեզուի անցեալն աւելի լաւ են ուսումնասիրել գերմանացիները, անգլիացիները եւ ֆրանսիացիները իրենց պետական օժանդակութիւններով, քան թէ մեր բազմաջան բարեգործ բանասէրները. որոնք զոհուել են գաղափարական թուիչքներին։ Իսկապէս բուն երկրի մէջ գործող, իրական աշխարհը քննող, աւերակները պեղող եւ կործանուածների արտայայտութիւնների հիման վերայ ուսումնասիրութիւններ կատարող, բերդերի, ամրոցների, դղեակների, գերեզմանների բեկորների ցուցումների համաձայն մի նոր եւ գրական գործ չէ կատարուած։ Այս ուղղութեամբ նոր սկսած գործերը խիստ թերի եւ չարունակութեա՛ն անհրաժեշտութիւն կայ. բայց այդ թերին լրացնող դեռ չի երեւում։

Այս ասպարիզում մեծ գործ կատա-

բել են Մխիթարեանները երկու հարիւր տարեան անընդհատ խուզարկութիւններով-զրաղարանների մէջ, որոնք վանքերում անուել, խնամուել եւ ամբողջ ոյժով նուիրուել են մեր նախնեաց գործերի ուսումնասիրութեամբ: Մխիթարեանները ոչ միայն հնից մնացած գրականութիւնը քննութիւնների բովից անցկացրին եւ զտեցին, այլ Եւրոպական գրականութեան մէջ մեր երկրի, լեզուի, գրականութեան, պատմութեան, ցեղագրութեան, պեղումներից դուրս բերուածների մասին յայտնագործուած ամէն մի գործ թարգմանեցին եւ ժողովրդականացրին: Սորանից աւելին չէին կարող անել, քանի որ նիւթապէս կաշկանդուած էին եւ տիրող պետութիւններից արգիլուած: Այլիշանը 70 տարի Հայաստան երգեց եւ առանց Հայաստանը տեսնելու, այցելելու՝ գերեզման իջաւ: Այտնեանը Հայ դեղջուկի դաւառական բարբառները եւ նրանց կազմն ու փոփոխութիւնները վերլուծեց, առանց Հայաստանի օդը շնչելու եւ ջուրը խմելու:

Նկատի ունենալով որ այժմ հին Հայաստանի դաւառների յիշատակարաններից մնացորդները ի սպառ կործանուում են, կենդանի Հայաստանը ի սպառ ջնջելուց յետոյ, պատմական յիշատակարանների ջնջումն է կատարուում, Լէնդ-Թեմուրի, Լալա եւ Օսման-Ֆէյզի փաշաների կիսատ թողածները մեծ քաջագործութեամբ լրացնում են. ուստի հաւաքածս տեղեկութիւնները, փաստերը, ուսումնասիրութիւնները ձորոխի Աւազանում ցանկացայ սոյն երկով աւանդել ապագայ սերնդին: Քսան տարի է տքնում էի քիչ ապահովել տնտեսական, անձամբ այցելել նորից այդ վայրերը, աւերակները լուսանկարել, չէնքերի յատակագծերը, հատուածականները գծագրել ամբողջ ձորոխի Աւազանում, վերստուգել տեղն ու տեղը եւ գրուածներս պատկերներով ներկայացնել գիտական աշխարհի քննութեան. բայց՝ 1914 թ. սկսած միջազգային զարհուրելի սեռերածը՝ ծրագրերս հիմքից խորտակեց եւ ես սպիտակեմ այս օր միայն հնարաւորը տալ, թողնելով ապագային՝ յաջորդներին իրենց դատողութեամբ չարունակելու ինչ որ օգտաւէտ կը գտնին իրենց ժառանգների համար:

Լենինական:
(Շարունակելի:)

ԱՏՐՊԵՏ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

"DER KLEINE HERDER„. Nachschlagebuch über alles für alle. Freiburg i. Br. 1925. I. Halbb. A.-K. 8°, 752. II. Halbb. L.-Z, 8°, 780.

Հերդերի նշանաւոր հրատարակութիւններից մին է այս "Հանրագիտակ„ը: Գիրքը բանալիս աչքի է զարնուում նրա արտաքին գեղեցկութիւնը՝ փոքր, բայց որոշ գիրը, պատկերազարդ էջերը — ունի 4.000 պատկերներ եւ այն լուսանկարի եղանակով յաջողուած արտատպութեամբ, որից Larousseը եւ նման գործերը զուրկ են:

Իսկ բնագիրը բոլորովին գիտական, սակայն շատ դիւրահասկանալի ոճով գրուած: Տեղեկութիւնները հակիրճ, պայծառ ու առարկայական են, միշտ էականն ու նորագոյն տեսակէտն է յառաջ բերուում: "Փոքրիկ Հերդերը„ գիտացել է իրան մի ժողովրդական գիրք անել սովորեցնելով թէ ինչպէս գիտութիւնը ամենօրեայ կեանքի համար օգտագործել կարող ենք, մանաւանդ համաշխարհային պատերազմից յետոյ, որը սովորեցրեց մեզ շատ բան խնայել եւ ամենաէնէին բանն օգտակարապէս գործածել: Այսպէս նա տալիս է միշտ վստահելի պատասխան ամենօրեայ կեանքի ամէն հարցերի մասին՝ լինի հարցանողը գիտնական կամ անուս, երկրագործ կամ արհեստաւոր, ուսուցիչ, վաճառական, ճանապարհորդ, բնութեան եւ սպորտի բարեկամը կամ գրքերի ցեցը, խնամոտ մայրն ու տանտիկինը, նաեւ հետաքրքիր աղախինը ու գլխաւորաբար ակադեմականը, որ Գակուլտէտի էլ վերաբերուի, մի խօսքով բաղմանձնեայ "ամէն ոք„ը. աւելի քան 50.000 հարցերի մասին է խօսում նա: Մասնաւոր տեղ են գրաւում երկիրներն ու քաղաքները, ինչպէս եւ Հայաստան բաւական ընդարձակ, Երեւան, Էջմիածին, Նախիջեւան եւն: Բաղձալի էր մեզ սակայն կարդալը թէ քրիստոնէութիւնն առաջին անգամ Հայաստանում է պետական կրօնք դարձել (Գելցեր) կամ հայերը ունին մի առանձնայատուկ գիր եւ գրականութիւն Ե. դարի սկիզբից:

Վ. ՊԵՆՏՈՅԵԱՆ

ՀԱՍՍՌ Ակադ.ՍՍՌ Հ. Մ. Մաշտոցի անվան Ձեռագրերի ինստիտուտ